Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1344-27.04.2026-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2011 թվականի նոյեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 20-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Անժամկետ եւ անհատույց ընդերքօգտագործումն իրականացվում է սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված դեպքերում եւ կարգով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 48-րդ հոդվածի.

1) վերնագրում «անձանց եւ քաղաքացիներին» բառերը փոխարինել «եւ ֆիզիկական անձանց» բառերով.

2) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Իրավաբանական եւ ֆիզիկական անձինք առանց ընդերքօգտագործման իրավունքի ձեւավորման, իրենց սեփական հողամասերի սահմաններում, կառավարության սահմանած կարգով տեղյակ պահելով լիազոր մարմնին, առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման, կարող են իրականացնել պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման հետեւյալ աշխատանքները.

1) բացառապես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող՝ սեփական տնտեսական եւ կենցաղային կարիքների բավարարման նպատակով՝ մինչեւ երկու մետր խորությամբ, ինչպես նաեւ ստորերկրյա կառույցների շինարարություն՝ մինչեւ հինգ մետր խորությամբ.

2) շահույթ ստանալու նպատակով պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ օրացուցային տարվա ընթացքում առավելագույնը 20 խորանարդ մետր ծավալով.

3) շահույթ ստանալու նպատակով պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ բազմաբնակարան շենքերի եւ հասարակական շինությունների կառուցման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում նշված խորությամբ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «սեփական կարիքների համար» բառերը:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից:

2. Սույն օրենքից բխող փոփոխությունները ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտում կատարվում են սույն օրենքն ընդունվելուց հետո եռամսյա ժամկետում: